ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N AGGM/AZD-25-005
Ապրանքի առուվաճառքի

ք. Արմավիր «08» հունվար 2025թ.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս Արմավիրի ԳԳՄ-ի տնօրեն Կարեն Մեջլումյանի, որը գործում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից 30.12.2024թ. տրված N 01/15.2/5683-2024 լիազորագրի հիման վրա, մյուս կողմից և «Միասնական Սոցիալական Ծառայություն» պետական մարմինը,այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Աղաբաբյանի, մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին որպես սեփականություն հանձնել և տեղադրել գազի անվտանգության համակարգ, որը բաղկացած է մեկ հատ վթարային անջատիչ կափույրից և երկու հատ HD 2000 տիպի ազդանշանային սարքից (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Ապրանքը Վաճառողի կողմից Գնորդին համարվում է հանձնված Ապրանքը Գնորդի ներկայացուցչին հանձնելու և ապրանքի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

1.3 Ապրանքի հանձնման և տեղադրման վայր՝ ՀՀ Արմավիրի մարզ,Բաղրամյան համայնք,գ.Բաղրամյան փ.Բաղրամյան 1:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վաճառողը պարտավոր է՝

2.1.1. Գնորդին հանձնել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված Ապրանքը,

2.1.2. Ապրանքը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները և դրան վերաբերվող փաստաթղթերը, ինչպես նաև (անհրաժեշտության դեպքում) Ապրանքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթերը,

2.1.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,

2.1.4. մինչև Պայմանագրի կատարումը ծագած հիմքով երրորդ անձանց կողմից Ապրանքը առգրավելու դեպքում հատուցել Գնորդի վնասները,

2.1.5. Գնորդին տրամադրել Ապրանքի որակին ներկայացվող պահանջների համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ (անհրաժեշտության դեպքում),

2.1.6. Ապրանքը Գնորդին հանձնել պատշաճ տարայով և (կամ) փաթեթով,

2.1.7. Ապրանքը Գնորդին հանձնել և տեղադրել վճարումը ստանալուց հետո 20 աշխատանքային օրվա ժամկետում,

2.2. Վաճառողն իրավունք ունի՝

2.2.1. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրին համապատասխան հանձնված Ապրանքի համար,

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. Ապրանքի պատկանելիքները և փաստաթղթերը Պայմանագրով սահմանված կարգով Վաճառողի կողմից չհանձնելու դեպքում հրաժարվել Ապրանքից,

2.3.2. Ապրանքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում պահանջել փոխարինելու անպատշաճ որակի Ապրանքը սովորաբար նման տեսակի ապրանքի նկատմամբ ներկայացվող պահանջներին բավարարող ապրանքով:

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի 3.2. կետով սահմանված վճարման փաստաթուղթ ներկայացնելու պայմանը Վաճառողի կողմից պահպանելու դեպքում, վճարել Ապրանքի համար,

2.4.2. կատարել Պայմանագրին համապատասխան հանձնվող Ապրանքի ընդունման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

2.4.2. Ապրանքն ընդունելիս զննել այն, հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին,

2.4.3. Ապրանքն ընդունելիս ստուգել դրա համապատասխանությունը տրանսպորտային և ուղեկցող փաստաթղթերում նշված տեղեկություններին:

3.Գինը և վճարման կարգը

3.1. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Ապրանքի գինը (ներառյալ տեղադրումը) կազմում է 44594 դրամ(քառասունչորս հազար հինգ հարյուր իննսունչորս) ներառյալ ԱԱՀ:

3.2. Պատվիրատուն Պայմանագրով սահմանված վճարումները կատարում է անկանխիկ՝ բանկային փոխանցմամբ:

3.3 Գնորդը պարտավոր է Ապրանքի համար վճարել որպես կանխավճար՝ ոչ ուշ քան սույն պայմանագիրը կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4.Կողմերի պատասխանատվությունը

4,1, Ապրանքը հանձնելու կամ հանձնելու ժամկետի(ների) խախտման համար Գնորդն իրավունք ունի պահանջել Վաճառողից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Պայմանագրի գնի 0,1%-ի չափով:

4.2. Գնորդի կողմից Պայմանագրով պայմանավորված վճարները սահմանված ժամկետում (ժամկետներում) չվճարելու դեպքում Վաճառողն իրավունք ունի պահանջել Գնորդից վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ չվճարված գումարի 0,1%-ի չափով:

4,3, Պայմանագրով իրենց պարտականությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.Եզրափակիչ դրույթներ

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով Կողմերի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

5.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

5.3. Պայմանագրում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

5.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

6.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող՝	Գնորդ՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ Իրավաբանական հասցե՝ ք.Երևան Թբիլիսյան խ/ճ 43 Գտնվելու վայր՝ ք. Արմավիր Հանրապետության 13 ՀՎՀՀ 00046317 Հ/հ 22003331210000 «Ակբա Բանկ» ՓԲԸ	«Միասնական Սոցիալական Ծառայություն» պետական մարմին ք.Երևան փ.Նալբանդյան 13 ՀՎՀՀ 02505511
Տնօրեն _____ Կ.Մեջլումյան	Գլխավոր քարտուղար _____ Ա.Աղաբաբյան

Կապալառու՝

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Արմավիրի ԳԳՄ
Բաղրամյանի SS

Տեղակայման հասցե՝

Տեսակ՝
Անձնագիր՝

Պատվիրատու՝
Միասնական սոցիալական ծառայության
Բաղրամյանի տարածքային կենտրոն
գ. Բաղրամյան Բաղրամյան փ. 1

Արմեն Սամվելի Ասատրյան
012418950 11.03.2020 054

ՆԱԽԱՀԱՇԻՎ
Ազդանշանային համակարգի տեղադրման

դեկտեմբեր 2024թ.

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Նյութածախս		Աշխատավարձ, սոց. վճար	Մեքենա-մեխանիզմ	Ընդամենը /դրամ/
		Քանակը	միավորի արժեք			
2	3	4	6	7	8	9
Ազդանշանային սարք	հատ	2	9192.82			18385.64
Վթարային անջատիչ կափույր 1/2"	հատ	0	3301.40			0.00
Վթարային անջատիչ կափույր 3/4"	հատ	1	4166.04			4166.04
Ճկուն մետաղական խողովակ 3/4"	մ	0.00	2123.54			0.00
Ճկուն մետաղական խողովակ 1/2"	մ	0.00	0.00			0.00
Հաղորդալար պղնձյա	մ	12.0	88.00			1056.00
Անցում արտաքին պարուրակով 3/4-3/4	հատ	0	890.00			0.00
Ագուցամանեկ 3/4"	հատ	0	633.83			0.00
Ագուցամանեկ 1/2"	հատ	0	298.25			0.00
Միջադիր 3/4"	հատ	0	71.20			0.00
Միջադիր 1/2"	հատ	0	107.00			0.00
Տափօղակ եռամաս 3/4"	հատ	0	252.25			0.00
Տափօղակ եռամաս 1/2"	հատ	0	71.26			0.00
Կցորդիչ 3/4"	հատ	1	156.09			156.09
Կցորդիչ 1/2	հատ	0	0.00			0.00
Սևեռամանեկ 3/4"	հատ	1	121.67			121.67
Սևեռամանեկ 1/2"	հատ	0	0.00			0.00
Պարուրակախողովակ 3/4	հատ	1	235.37			235.37
Պարուրակախողովակ 1/2	հատ	0	189.42			0.00
Խողովակաստ 1/2	հատ	0	120.01			0.00
Խողովակաստ 3/4	հատ	2	147.17			294.34
Խողովակ d=20մմ	մ	0.00	630.00			0.00
Շրջկապ+դյուբել 27մմ 3/4"	հատ	0	112.41			0.00
Շրջկապ+դյուբել 22մմ 1/2"	հատ	0	36.79			0.00
Ամրակ մալուխ միացնող գործիքի	հատ	0.0	22.75			0.00
Ֆտորոպլաստե խցանող նյութ	մ	2.0	29.17			58.33
Սկավառակ Կտրող ԱՑ-Դ125	հատ	0.00	345.00			0.00
Մեկուսիչ ժապավեն /իզոլենթ/	մ	0.0	14.33			0.00
Կարբիդ	կգ	0.304	710.00			215.84
Լար զոդման	կգ	0.033	900.00			29.70
Թթվածին	խ/3	0.076	460.00			34.96
Ընդամենը լրակազմողների արժեքը						24753.98
Ազդանշանային համակարգի տեղադրում				4295		4295
Մեքենա մեխանիզմի շահագործում						0.00
Տրանսպորտային ծախսեր					500.00	500.00
Ընդամենը						29549.0
Վերադիր ծախսեր 13.3%						3930.0
Ընդամենը						33479.0
Շահույթ 11%						3682.7
Ընդամենը						37161.7
ԱԱՀ 20%						7432.3
Ընդամենը						44594

Կազմեց՝ Ա. Մելիքյան

Ստուգեց՝ Ա. Մկրտչյան